ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

Հոդված 1. 2013 թվականի դեկտեմբերի 5-ի Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 83-րդ հոդվածի 6-րդ մասում «ռեգիստր ուղարկում» բառերը փոխարինել «ռեգիստրի էլեկտրոնային տեղեկատվական շտեմարան մուտքագրում» բառերով:

Հոդված 2. Օրենսգրքի 92-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Անշարժ գույքի նկատմամբ կամ դրա կապակցությամբ հայցի ապահովման միջոցներ կիրառելու մասին որոշումն անշարժ գույքի պետական ռեգիստրի էլեկտրոնային տեղեկատվական շտեմարան մուտքագրելու դեպքում դատարանն այն անշարժ գույքի պետական ռեգիստրի էլեկտրոնային տեղեկատվական շտեմարան է մուտքագրում էլեկտրոնային եղանակով՝ Կառավարության սահմանած կարգով:»:

Հոդված 3. Օրենսգրքի 93-րդ հոդվածի 7-րդ մասում բոլոր «ուղարկել» բառերը փոխարինել «մուտքագրել» բառով՝ համապատասխան հոլովաձևերով, իսկ «ռեգիստր» բառերը փոխարինել «ռեգիստրի էլեկտրոնային տեղեկատվական շտեմարան» բառերով:

Հոդված 4.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Հանրապետության նախագահ **Վ. Խաչատուրյան**

2026թ., Երևան

ՀՕ - ... - Ն